



# ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ

## ԱՆՎՏԱՆԳ ՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանի քվեարկողներին տրամադրելով քվեարկության անվտանգ, ճշգրիտ և թափանցիկ փորձառություն:

Los Angeles վարչաշրջանի քվեարկության նոր փորձառությունը նախատեսված է լինել անվտանգ և թափանցիկ բոլոր քվեարկողների համար: Գոյություն ունեն համակարգի տարբեր մասնիկներ, որոնք պաշտպանում են ընտրությունների ազնվությունն ու քվեարկության գործընթացը:

### ■ ԱՊԱՀՈՎ ՆԱԽԱԳԻԾ

Քվեաթերթիկ պատրաստող սարքը (Ballot Marking Device, BMD) տպում է քվեարկողին ստուգող թղթե քվեաթերթիկ: Քվեարկողի ընտրությունները տպվում են մարդկային-ընթեռնելի տեսքով և համարվում են գրանցված պաշտոնական քվեարկություն: Ըստ նախագծի՝ BMD-ն միացված չէ որևէ ցանցի կան համացանցի: Այն նաև չի հավաքում որևէ ընտրողի տվյալներ կամ քվեարկության արդյունքներ:



### ■ ՄԱՍՆՎՈՐ ԵՎ ԳԱՂՏՆԻ

Էլեկտրոնային հարցաթերթիկների մեջ պարունակվող քվեարկողների տեղեկությունները կապված չեն BMD-ի կամ քվեարկության արդյունքների համակարգի հետ: Նրանք անկախ են մնում մեկը մյուսից՝ քվեարկողի անձնական տեղեկությունները պաշտպանելու համար: Տպված քվեաթերթիկները չեն պարունակում քվեարկողի վերաբերյալ որևէ տեղեկություն:



### ■ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Los Angeles վարչաշրջանի Գրանցող-արձանագրություն պահող/Վարչաշրջանի քարտուղարի գրասենյակը քվեարկության գործընթացի յուրաքանչյուր քայլի համար ապահովում է համապատասխան անվտանգության արձանագրություններ: Ընտրությունների անձնակազմն ունի օգտագործողին հատուկ հավաստարձագրեր՝ չթույլատրված մուտքի հավանականությունը պակասեցնելու համար: Ինտեգրված քվեատուփերի (Integrated Ballot Box, IBB) կողպեքներն ու չթույլատրված բացելը ցույց տվող կնիքները, ինչպես նաև ընտրությունների զգայուն սարքերը պաշտպանում են բոլոր ընտրությունների ամբողջականությունը և ապահովում են ստուգելի պահպանության շղթան:



### ■ ԹԱՓՈՒՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության նոր փորձառությունը ներառում է անհրաժեշտ պաշտպանությունը համակարգի խոցելիության դեմ՝ մինևույն ժամանակ ապահովելով թափանցիկություն և քվեարկության գործընթացին հանրային հասանելիություն՝ իրականացնելով քվեարկված քվեաթերթիկների 1%-ի ձեռքով աուդիտ, որը իրականացվում է վկայագրումից առաջ՝ հետ-ընտրական գործընթացի ժամանակ:

